Հաստատում եմ

Տնօրենի ժ/պ՝ Խ. Գևորգյան

31. 08. 2024թ

Digitally signed by GEVORGYAN KHAZHAK 3008660126
Date: 2023.10.17 11:42:44 AMT

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք.Միսիան, հ.5հիմն. դպրոց

Խաչումյան Վարդուհի Խաչիկի

2023-2024 ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) IV ա դասարանում սովորում է 23 աշակերտ՝ 16 տղա և 7 աղջիկ: Բոլոր երեխաները ֆիզիկապես առողջ են: Ապահովված են դասագրքերով և անհրաժեշտ գրենական պիտույքներով: Դասարանն ապահովված է համապատասխան կահույքով և անհրաժեշտ պարագաներով: Դասարանում ստեղծված է աշակերտական համերաշխ կոլեկտիվ , որտեղ իշխում է փոխադարձ հարգանքը, ընկերական սերը և համերաշխությունը: Դասարանը պայքարում է կարգապահության , օրինակելի վարքի և բարձր առաջադիմության համար:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները ա/ համախմբել, ձևավորել դասարանական կոլեկտիվ բ/ ձևավորել սովորողների միջև ներդաշնակ, համերաշխ հարաբերություններ գ/ աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում դ/ սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ ե/ ապահովել դասարանի ընդհանուր զարգացվածության մակարդակը, հասնել բոլոր աշակերտների գիտելիքների որակի բարձրացմանը զ / պաշտպանել աշակերտների իրավունքներն ու շահերը է/ ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ ը/ դաստիարակել հայրենասիրություն, հարգանք և հոգատարություն մեծերի նկատմամբ թ/ մշակել վարքի հմտություններ՝ ճիշտ և գեղեցիկ դիմելաձև, խոսքի կուլտուրա

Հայեցի դաստիարակություն Հոգևոր դաստիարակություն Աշակերտների մոտ հայեցի դաստիարակության գործում մեծ դեր ունի հայրենասիրության սերմանումը: Սերը դեպի հայրենիքը, սերը դեպի մայր հողը կձևավորի աշակերտների մոտ նվիրվածություն, հավատարմություն: Հոգևոր դաստիարակության կարևոր նախապայմանը բարությունն է:Ազգասիրության ճիշտ ընկալման միջոցով աշակերտները կդառնան հայրենասեր, կպահպանեն լեզուն ու կրոնը: Ծանոթացնել հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ որպես հոգևոր կենտրոնի, նրա նշանակության ու դերի մասին: Կարդալ Աստվածաշնչյան թեմաներ բարության և մարդասիրության վերաբերյալ:

Գեղագիտական դաստիարակություն Գեղեցիկի հետ առնչվելու իրավունքը դաստիարակության կարևորագույն տարրերից մեկն է: Գեղագիտական դաստիարակությունը ճիշտ ձևավորելու համար պետք է ծանոթացնել անցյալի մշակութային ժառանգությանը, մոտիկից իմանալ ժամանակակից արվեստը: Զարգացնել աշակերների գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, տեսողական հիշողությունը և տարածական պատկերացումները:

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Զրույցների միջոցով երեխաների հոգում նպատակաուղղված զարգացնել հայրենասիրական, քաղաքացիական պարտքի՝ հայրենիքին նվիրվածության և հավատարմության զգացում: Երեխաներին տեղեկություն տալ հայոց բանակի, Հայաստանի Հանրապետության զինանշանի, դրոշի, մարզերի մասին:

Ֆիզիկական դաստիարակություն Առողջության ամրապնդման համար ֆիզիկական դաստիարակությունը կարևոր նշանակություն ունի:ֆիզիկական կուլտուրայի սիստեմատիկ պարապմունքների ընթացքում դաստիարակել հետաքրքրություն սպորտի, առողջ ապրելակերպի վերաբերյալ:Գիտելիքներ ունենալ օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի վերաբերյալ
Աշխատանքային դաստիարակություն Աշխատանքի նկատմամբ սեր և պատասխանատվություն, կարողություններ և հմտություններ ձևավորելու և զարգացնելու համար օգտագործել մեծերի օրինակները, փորձը, զրույցները և այլն: Հաջողությունների հասնելու հիմքը աշխատասիրությունն է:

Դրա համար անհրաժեշտ է զարգացնել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը և պարտաճանաչությունը:

Բնապահպանական դաստիարակություն Հայրենի բնաշխարհի պահպանումն ու խնամքը շատ կարևոր հիմքեր պետք է ունենա յուրաքանչյուր անձի մոտ: Անհրաժեշտ է կրթել, դաստիարակել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի և բնության հանդեպ: Աշակերտներին ծանոթացնել բնապահպանական մի շարք կանոնների:

Դպրոց-ընտանիք կապը Ապահովվել դպրոց և ընտանիք կապը:Կազմակերպել զրույցներ երեխաների առողջության, հանգստի, խաղի, ուսուցման ճիշտ կազմակերպման վերաբերյալ: Այս կապը պետք է շարունակական լինի:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ	Նշումներ
1	Աշակերտների հանդիսավոր ընդունում: Զրույց<< Սեպտեմբերի մեկը գիտության, դպրության և գրի օր,, թեմայով: Դասագրքերի բաշխում:Ծնողական ժողովի հրավիրում:Ծնող.խորհրդի նախագահի և անդամների ընտրություն:	04 09-08.09	Տնօրեն ություն դասվար	
2	Էքսկուրսիայի կազմակերպում դպրոցամերձ այգի վաղ աշնան հետքերով: Զրույց<< Ամառային տպավորություններ>> թեմայով: Դասարանի ավագի ընտրություն:	11 09-15.09.	Ծնողներ, դասվար	
3	Կարգապահական կանոնների մշակում: Զրույց այդ թեմայով: Հայրենասիրական ոգով տոգորված երգերի և ոտանավորների ուսուցում:	18.09.-22.09	դասվար	
4	Հիշեցնել երթևեկության կանոնները:Զրույց <Ես հետիոտն եմ> թեմայով	25.09-29.09	դասվար	
5	Զրույց < <Իմ ուսուցիչը> թեմայով:Սովորեցնել գնահատել ուսուցչի նվիրյալ գործը:Երգերի և ոտանավորների ուսուցում նվիրված ուսուցիչներին	02.10-06.10	դասվար	
6	Տեղեկությունների հավաքում մեր հայրենիքի մասին:Զրույց այդ թեմայով	09.10-13.10	Ծնողներ դասվար	
7	Սովորեցնել ինչ վարք դրսևորել տանը, դպրոցում և փողոցում:Սերմանել սեր, հարգանք շրջապատի հանդեպ:	16.10-20.10	դասվար	
8	Զրույց<< Կոնֆլիկտների հաղթահարում>>թեմայով:Խուզարկուները պատմվածքի ընթերցում և քննարկում:	30.10-03.11	դասվար	
9	Զրույց< Ոսկեհեր աշուն թեմայով: Էքսկուրսիայի կազմակերպում ուշ աշնան հետքերով:	06.11-10.11	դասվար, ծնողներ	

10	Սովորեցնել հարգել ոչ միայն ընտանիքի անդամներին, այլ նաև շրջապատի մարդկանց: Զրույց<< Իմ ընտանիքը>> թեմայով:Ոտանավորների և երգերի ուսուցում նվիրված ծնողներին:	13.11-17.11	դասվար	
11	Զրույց<<Գեղեցիկը կփրկի աշխարհը>>:Սովորեցնել գտնել գեղեցիկը , գնահատել և արժեքավորել:	20.11-24.11	դասվար	
12	Վարժություն<<Մենք չանենք, որ ով անի>: Պատմվածքի ընթերցում և քննարկում	27.11-01.12	դասվար	
13	Ծանոթացում բնական աղետներին:Լռության րոպե դեկտեմբերի յոթի երկրաշարժի զոհերի հիշատակին:	11.12-15.12	դասվար	
14	Զրույց<< Օգնենք մեր փոքրիկ բարեկամներին>>թեմայով:Կերակրամանների պատրաստում:	11.12-15.12	դասվար	
15	Հեքիաթի ժամ:< <Ես ուզում եմ,որ…>թեմայով զրույցի անցկացում:Ամանորին նվիրված տոնական բացիկների պատրաստում	18.12-22.12	դասվար	
16	2023-2024թ. Խաղաղության տարի:Զրույց <Ինչպես եմ անցկացրել Ամանորը> թեմայով:	08.01-12.01	դասվար	
17	Կարգապահական կանոնների վերհիշում: Զրույց <<Կարգապահությունը ձևավորվում է դպրոցական նստարանից >> թեմայով:	15.01-19.01	դասվար	
18	Զրույց նվիրված հայոց բանակին: Հայրենասիրական ոգով բանաստեղծությունների և երգերի ուսուցում: Հարգանքի տուրք մատուցել դպրոցի հերոս սաներին Զրույց<<Իմ հերոսը>>թեմայով	22.01-26.01	դասվար	
19	Սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում:Լսել դասարանի ավագին	29.01-02.02	դասվար, ավագ	
20	Զրույց<<Մեր քաղաքակիրթ դասարանը>>թեմայով:	05.02-09.02	դասվար	
21	Թումանյանական շաբաթ:Արթնացնել սեր գրքի խնամքի նկատմամբ:Դասարանում կատարել գրքի վերանորգում:	12.02-16.02	դասվար	
22	Զրույց<<Իմ իրավունքները և պարտականությունները >> թեմայով:Պաշտպանված են արդյոք աշակերտների իրվունքները դպրոցում:	19.02-23.02	դասվար	
23	Զրույց<<Մայր իմ անուշ ու անգին>>թեմայով:Մայրերին նվիրված բանաստեղծությունների և երգերի ուսուցուն: Տարհանում:	26.02-01.03	դասվար	
24	Միջդասարանային երեկույթ<<Իմ մայրը>>թեմայով:	04.03-08.03	դասվար	
25	Զրույց<<Ես և շրջակա աշխարհ>>թեմայով: Բնության մեջ փոփոխությունների դիտարկման էքսկուրսիայի կազմակերպում	11.03-15.03	դասվար	
26	Միջդասարանային երեկույթ<<Իմ մայրը>>թեմայով:	18.03-22.-03	դասվար	
27	Զրույց<<Խրիմյան Հայրիկի ծննդյան օրը>>թեմայով:Հետադարձ հայացք Խրիմյան Հայրիկի կյանքին ու գործունեությանը:	25.03-29.03	դասվար	
28	Հայ առաքելական եկեղեցական տոները: Զրույց<<Սուրբ Զատիկ>>թեմայով:Վեր հանել տոնի գաղափարը:	01.04-05.04	դասվար	
29	Զրույց<<Հանդուրժողականություն>>թեմայով: Որքանով ենք սովորել իրար լսել և հասկանալ	08.04-12.04	դասվար	

30	Զրույց<< Եղեռնի հարյուր յոթ ամյակը>>թեմայով: Ցեղասպանություն,հայոց պատմության արյունոտ էջերից:	15.04-19.04	դասվար	
31	Մայիսը հաղթանակների ամիս:Հայրենասիրական ոգով տոգորված երգերի և ոտանավորների ուսուցում	22.05-26.05	դասվար	
32	Հիշենք արդի հերոսներին անուն առ անուն:Զրույց<< Իմ հերոսը>> թեմայով:	29.05-03.06	դասվար	
33	Ավարտական հաշվետու միջոցառում:	15.05.-19.05	դասվար	
34	Դասագրքերի հավաքում:Ծնողական ժողովի հրավիրում: Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպում:	22.05-26.05	դասվար	